ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 210744

05 դեկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԶԻԶ ՂԱՍՈՅԻ ՀԱՍՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՀԵՍՏԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Թորամանյան փողոցի թիվ 26 տան բնակիչ Ազիզ Ղասոյի Հասոյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 07.04.2022թ. հաստատված թիվ 2074 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 01.09.2022թ. կատարված չափագրության, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագրի՝ 2022B6PMRN, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Թորամանյան փողոցի թիվ 28 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում կառուցված բնակելի տունը, օժանդակ և տնտեսական շինությունները պատկանում են Ազիզ Ղասոյի Հասոյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.1353հա, որի վրա կառուցված է բնակելի տուն, տնտեսական և օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.03հա սահմանազատված հողամաս.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերում կառուցված բնակելի տունը, տնտեսական և օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թ.Թորամանյան փողոցի թիվ 28 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, տնտեսական և օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.03հա մակերեսով հողամասը համարել Ազիզ Ղասոյի Հասոյանի /ծնված 12.03.1958թ./ սեփականությունը:
2. Ինքնակամ կառուցված 52.5քմ /արտաքին 52.5քմ, ներքին 42.6քմ/ մակերեսով պահեստը ճանաչել օրինական, որի համար՝ սահմանված 103 373 / հարյուր երեք հազար երեք հարյուր յոթանասուներեք / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21084

06 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՍՈՒՐԵՆ ՍԱՄՍՈՆԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 33/22 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի 2-րդ զանգված թիվ 203 հասցեում, Ջուլիետա Շահվերդյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում Սուրեն Սամսոնի Շահվերդյանի կողմից առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ իրականացնելու համար վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, պարզեց, որ

Սուրեն Սամսոնի Շահվերդյանը (հասցե՝ ք. Էջմիածին, Արագածի զնգ. թիվ 203 տուն, ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան քաղաք, Սարալանջի 6 շենք, թիվ 39 բն. անձնագիր՝AU0261146 տրված 06.05.2021թ.-ին 001-ի կողմից), իր կին՝ /հիմք՝ 24.12.1985թ-ին տրված թիվ 259799 ամուսնության վկայական/ Ջուլիետա Շահվերդյանին սեփականության իրավունքով պատկանող, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի 2-րդ զանգված թիվ 203 քոթեջ հասցեում գտնվող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով սահմանված պահանջները, առանց թույլտվության իրականացրել է շինարարական աշխատանքներ, ինչի կապակցությամբ ՀՀ ոստիկանություն Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա.Բդոյանի 13.10.2022թ.-ի թիվ 464/2./9775 գրության և կից նյութերի /համայնքապետարան մուտքագրվել է 19.10.2022թ./ հիման վրա 2022 թվականի հոկտեմբերի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում լսումներ իրականացնող հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Սուրեն Սամսոնի Շահվերդյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- ՀՀ ոստիկանություն Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա.Բդոյանի 13.10.2022թ.-ի թիվ 464/2./9775 գրությունը և կից նյութերը:
- Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 24.10.2022 թվականին կազմված թիվ 7 արձանագրությունը, տեղազննության արձանագրությունը և լուսանկարները:
- Համայնքի ղեկավարի 28.10.2022 թվականի «Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի 2-րդ զանգված թիվ 203 քոթեջ հասցեում գտնվող հողամասի վրա առանց թույլտվության շինարարական աշխատանքներ իրականացնելը կասեցնելու մասին» թիվ 1986-Ա որոշումը:
- Հանձնաժողովի 09.11.2022թ. և 23.11.2022թ.-ի թիվ 33/22 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 և թիվ 2արձանագրությունները:
- Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 28.11.2022թվականին կազմված տեղազննության ակտ և լուսանկարչական հավելվածը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ հաստատված է համարվում հետևյալը.

Արմավիրի մարզ, ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան քաղաք, Սարալանջի 6 շենք, թիվ 39 բն. հասցում հաշվառված Սուրեն Սամսոնի Շահվերդյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի 2-րդ զանգված թիվ 203

հասցեում, Ջուլիետա Շահվերդյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում, կատարել է շինարարական աշխատանքներ /մասնակի քարե պարսպի կառուցում/ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Վերը նշված իրավախախտումը կասեցնելու նպատակով Վաղարշապատ համայնքի ղեկավարը ընդունել է 28.10.2022 թվականի «Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի 2-րդ զանգված թիվ 203 քոթեջ հասցեում գտնվող հողամասի վրա առանց թույլտվության շինարարական աշխատանքներ իրականացնելը կասեցնելու մասին» թիվ 1986-Ա որոշումը, որի վերաբերյալ համապատասխան ծանուցումը փոստային առաքմամբ ուղարկվել է Սուրեն Սամսոնի Շահվերդյանին և հրապարակվել azdarar.am պաշտոնական կայքում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի նոյեմբերի 9-ին հրավիրվել է լսում, որը հետաձգվել է Սուրեն Սամսոնի Շահվերդյանի կողմից ծանուցումը չստանալու պատճառով: Այլ հերթի նշանակված լսումը հրավիրվել է և անցկացվեց 2022 թվականի նոյեմբերի 23-ին:

Ներկայանալով նիստին՝ Սուրեն Սամսոնի Շահվերդյանը խնդրել է, իրեն տրամադրել 5-օրյա ժամկետ իրավախախտման հետևանքները վերացնելու համար:

28.11.2022 թվականին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի 2-րդ զանգված թիվ 203 քոթեջ հասցեում կատարվել է տեղազննություն, որի ընթացքում պարզվել է, որ Սուրեն Սամսոնի Շահվերդյանի կողմից շինարարական աշխատանքները դադարեցվել են, պատի նոր կառուցված մասը քանդվել է, տարածքը բերվել է նախկին տեսքի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի անկեղծ զղջումը, իրավախախտման վնասակար հետևանքները կանխելը, պատճառած հետևանքները կամավոր վերացնելը, ինչպես նաև հիմք ընդունելով 28.11.2022թ.-ին տարածքի ուսումնասիրության հիման վրա կազմված տեղազննության ակտը՝ Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը, հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից երկուհազարապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար

չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Տվյալ պարագայում Սուրեն Սամսոնի Շահվերդյանի կողմից դադարեցվել են շինարարական աշխատանքները, քանդվել է ինքնակամ կառուցված պատը, տարածքը բերվել է նախկին տեսքի:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, Սուրեն Սամսոնի Շահվերդյանի կողմից դրսևորած վարքագիծը՝ իրավախախտումը դադարեցնելու և հետևանքները վերացնելու ուղղությամբ և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ և 154-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սուրեն Սամսոնի Շահվերդյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հասանելի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրքում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2109-Լ

«07» դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով դեկտեմբերի 7-ին՝ երկրաշարժի զոհերի հիշատակի օրը, անմեղ զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար, սերբ օդաչուների հիշատակը հավերժացնող հուշակոթողին ծաղկեպսակ խոնարհելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 35.0 հազ. դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2110-Լ

«07» դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ, 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՏՈՄՍԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով, Վաղարշապատ համայնքից 44-օրյա պատերազմում զոհվածների երեխաների համար Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնական միջոցառման համար տոմսեր ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 330.0 հազ. դրամ փոխանցել <<Պարկ Գրուպ>> ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2111-Լ

«07» դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ, 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, Վաղարշապատ համայնքից 44-օրյա պատերազմում զոհվածների երեխաների համար նվերներ ձեռք բերելու նպատակով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 104.8 հազ. դրամ փոխանցել <<Մանկան>> ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 211/24

07 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶՎԱՐԹՆՈՑ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 2 ԴՌԱՆ, 2 ՊԱՏՈՒՀԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 1 շենքի թիվ 4 բնակարանի բնակիչ Գրետա Ազատի Ասատրյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 17.11.2022թ. տրված թիվ 17112022-04-0011 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 17.11.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2022X8GR9A / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 1 շենքի թիվ 4 բնակարանին կից ինքնակամ կառուցված 47.3քմ մակերեսով կցակառույցի, ինքնակամ բացված թվով 2 դռան և 2 պատուհանի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 1 շենքի թիվ 4 բնակարանին կից ինքնակամ կառուցված 47.3քմ մակերեսով կցակառույցը, ինքնակամ բացված թվով 2 դուռը և 2 պատուհանը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 35 817 / երեսունհինգ հազար ութ հարյուր տասնյոթ / ՀՀ դրամ:
2.Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21134

07 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 17 ՇԵՆՔԻ ԹԻՎ 16 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կատովսկու փողոցի թիվ 25 տան բնակիչ Անահիտ Վարդանի Հովհաննիսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 27.09.2017թ. տրված թիվ 30112022-04-0048 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 14.10.2022թ. կատարված չափագրությունը /, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 17 շենքի թիվ 16 բնակարանին կից ինքնակամ կառուցված 26.7քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 17 շենքի թիվ 16 բնակարանին կից ինքնակամ կառուցված 26.7քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 15 772 / տասնհինգ հազար յոթ հարյուր յոթանասուներկու / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 211/4

07 դեկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արարատ համայնքի Պարույր Սևակ գյուղի թիվ 2 փողոցի թիվ 5 տան բնակիչ Հովհաննես Գևորգի Ֆահրադյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք 15.03.2018թ. տրված թիվ 15032018-04-0032 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331 կողմից 11.10.2022թ. կատարված չափագրությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022F6YWUS / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շիրվանզադեի փողոցի թիվ 20/1 հասցեում գտնվող 0.0264հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 147.4քմ / 147.4քմ արտաքին, ներքին 114.7քմ / մակերեսով բնակելի նշանակության կիսակառույց շինությունները և պարիսպը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շիրվանզադեի փողոցի թիվ 20/1 հասցեում գտնվող 0.0264հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 147.4քմ / 147.4քմ արտաքին, ներքին 114.7քմ / մակերեսով բնակելի նշանակության կիսակառույց շինությունները և պարիսպը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր 147.4քմ / 147.4քմ արտաքին, ներքին 114.7քմ / մակերեսով բնակելի նշանակության կիսակառույց օժանդակ շինությունների և պարսպի օրինականացման համար սահմանված 290 231 / երկու հարյուր իննսուն հազար երկու հարյուր երեսունմեկ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցիչ անձանց հանձնելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 211-Ա

09 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի, Նորվեգական փողոցի թիվ 30 հասցեի բնակիչ՝ Ելենա Ռազմիկի Առաքելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող, 04-081-0059-0015 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 29.12.2022թ. վավերացված թիվ 4058 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04081KFBDYMH/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 23-րդ փողոց թիվ 11 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 211ԼՀ

03 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ծովակալ Իսակով փողոցի թիվ 71 տան բնակիչ Ավետիս Ռուբիկի Կարագուլյանի դիմումը՝ իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25112019-04-0063, տրված 25.11.2019թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ /վկայական թիվ 0244/ կողմից կողմից 14.11.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրերը 04002TPYG3EA, 04002AD3NM9D/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-0067-0111 ծածկագրով անշարժ գույքը՝ համաձայն ներկայացված բաժանման սխեմայի, բաժանել.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ծովակալ Իսակովի փողոց թիվ 54/2 սննդի սպասարկման կետ,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ծովակալ Իսակովի փողոց թիվ 54/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2117-Լ

«07» դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ, 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, Վաղարշապատ համայնքից 44-օրյա պատերազմում զոհվածների երեխաների համար նվերներ ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 279.2 հազ. դրամ փոխանցել <<Մոբայլ Սենթր Արթ>> ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 211Ա

09 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի, Մ.Մաշտոցի փողոցի թիվ 85 տան բնակիչ Ռուզաննա Ռաֆիկի Կարապետյանի դիմումը՝ իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանվման վկայական թիվ 15122020-04-0061, տրված 15.12.2020թ. և <<Ավագյան Ավագ Գագիկի>> ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 22.11.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 040024TEJRAY, 04002YV56LXK/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքում գտնվող, Վազգեն Առաջինի փողոցի 47ա շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանը՝ համաձայն ներկայացված բաժանման /միավորման/ սխեմայի, բաժանել.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց 47ա շենքի թիվ 2 բնակարան,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց 47ա շենքի թիվ 2/1 բնակարան:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2119Ա

09 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Խրիմյան Հայրիկի /Նախկին Չերնիշևսկի/ փողոցի թիվ 4ա տան բնակիչ Խաչատուր Ղուկասի Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Խրիմյան Հայրիկի /Նախկին Չերնիշևսկի/ փողոցի թիվ 4ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայական թիվ 709249, տրված 11.05.2001թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002E7HCHZC/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Խրիմյան Հայրիկի փողոց թիվ 4/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 212ՈՒ

07 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով «Ագրո-Կորպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արշակ Վահագնի Կարապետյանի դիմումը «Ագրո-Կորպ» ՍՊԸ-ին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 07102020-04-0052 տրված՝ 07.10.2020թ., <<Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ>> ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 016/ կողմից 25.09.2022թ. կատարված չափագրությունը, հողամասի բաժանման /միավորման/ սխեման և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002S4DGYBV, 04002VHXJ7EZ/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 24 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ համաձայն ներկայացված բաժանման սխեմայի բաժանել.՝

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. էջմիածին, էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 24 ջերմոց,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. էջմիածին, էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 24/2 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21/21Կ

02 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Արցախի Հանրապետության բնակիչ՝ Կարեն Հրանտի Ալավերդյանի դիմումը՝ իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 07112022-04-0037, տրված 07.11.2022թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ /վկայական թիվ 0244/ կողմից կողմից 16.11.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002EGUNQMJ, 04002X9S7ZCC/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-0010-0002 ծածկագրով անշարժ գույքը՝ համաձայն ներկայացված բաժանման սխեմայի, բաժանել.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամաս թիվ 108 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամաս թիվ 108/1 բնակելի տուն :

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 213214

03 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Բերդ համայնքի Մովսես գյուղի 1 փողոցի թիվ 2 նրբանցքի թիվ 10 տան բնակիչ՝ Արիանա Արարատի Ավայանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 08122022-04-0082 տրված՝ 08.12.2022թ. «Կարեն Մաչանյան» ԱՁ /վկայական թիվ 0244/ կողմից 08.12.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002KZRPR9T, 04002RWZNJMQ/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0909-0040 ծածկագրով անշարժ գույքը՝ համաձայն ներկայացված բաժանման սխեմայի, բաժանել.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 363 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 363/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 212314

«12» դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՀԱՄԼԵՏ ԴԱՎԻԹԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ալավերդյան փողոցի 50Բ տուն հասցեի բնակիչ Կարմեն Տելեմակի Թովմասյանի 06.12.2022թ. դիմումը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 12.12.2022թ. թիվ 30 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ալավերդյան փողոցի 50Բ տուն հասցեի անչափահաս բնակիչ Համլետ Դավիթի Ներսիսյանի /ծնված՝ 25.11.2022թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 643017/ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով տատիկին՝ Կարմեն Տելեմակի Թովմասյանին /ծնված՝ 14.09.1973թ., անձնագիր՝ AP 06430611/:
2. Հսկողություն սահմանել անչափահաս Համլետ Դավիթի Ներսիսյանի /25.11.2022թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 643017/ խնամակալ Կարմեն Տելեմակի Թովմասյանի /ծնված՝ 14.09.1973թ., անձնագիր՝ AP 06430611/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8709/4

12 դեկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Անահիտ Բաղդասարի Հախվերդյանի լիազորված անձ՝ Աննա Արմենի Հարությունյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 17.02.1986թ. տրված տեխնիկական անձնագրի Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 17.11.2022թ. հաստատված թիվ 8709 և 8710 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 16.11.2022թ. կատարված չափագրության, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Խրիմյան Հայրիկի /նախկին Չերնիշևսկի/ փողոցի թիվ 23ա հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Անահիտ Բաղդասարի Հախվերդյանին, Արթուր Հակոբի Սարգսյանին և Դավիթ Հակոբի Սարգսյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.0371 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0,0036 հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում կառուցված բնակելի նշանակության շինությունները և ավել օգտագործվող հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Խրիմյան Հայրիկի /նախկին Չերնիշևսկի/ փողոցի թիվ 23ա հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0, 0036 հա մակերեսով հողամասը համարել Անահիտ Բաղդասարի Հախվերդյանի/ծնված 05.12.1958թ./, Արթուր Հակոբի Սարգսյանի/ծնված 27.09.1979թ./ և Դավիթ Հակոբի Սարգսյանի /ծնված 06.10.1980թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2482/X

12 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Անահիտ Բաղդասարի Հախվերդյանի լիազորված անձ՝ Աննա Արմենի Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Խրիմյան Հայրիկի /նախկին Չերնիշևսկի/ փողոցի թիվ 23ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ 17.02.1986թ., տրված տեխնիկական անձնագիրը, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 17.11.2022թ. հաստատված թիվ 8709 և 8710 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը 04002NF7CJSX/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Խրիմյան Հայրիկի փողոց թիվ 23/3 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21/2022

12 դեկտեմբերի 2022թ. քաղաք Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, մասսով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ա.Մանուկյան թաղամասի թիվ 334 տան բնակիչ Ալեն Վիգենի Տեր-Հովսեփյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0963-0042 և 04-002-0963-0047 ծածկագրերով անշարժ գույքերը /հիմք՝ 15.09.2022թ. տրված՝ թիվ 15092022-04-0031 և 15.09.2022թ. տրված՝ 15092022-04-0013 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002ZV3QCLS/ միավորել և տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 333-334 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2/274

12 դեկտեմբեր 2022թ.

ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 334 տան բնակիչ Ալեն Վիգենի Տեր-Հովսեփյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք 15.09.2022թ. տրված թիվ 15092022-04-0031 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096 կողմից 13.09.2022թ. կատարված չափագրությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022VF4UWK / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 334 հասցեում գտնվող 0.0477հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 479.6քմ / 479.6քմ արտաքին, ներքին 414.9քմ / մակերեսով բնակելի տունը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 334 հասցեում գտնվող 0.0477հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 479.6քմ / 479.6քմ արտաքին, ներքին 414.9քմ / մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր 479.6քմ / 479.6քմ արտաքին, ներքին 414.9քմ / մակերեսով բնակելի տան օրինականացման համար սահմանված 802 371 / ութ հարյուր երկու հազար երեք հարյուր յոթանասունմեկ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2128/X

12 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 334 տան բնակիչ Ալեն Վիգենի Տեր-Հովսեփյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք 15.09.2022թ. տրված թիվ 15092022-04-0013 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096 կողմից 13.09.2022թ. կատարված չափագրությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 20224ZTTJZ / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 333 հասցեում գտնվող 0.0453հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 186.9քմ / 186.9քմ արտաքին, ներքին 168.9քմ / մակերեսով բնակելի նշանակության օժանդակ և տնտեսական շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 333 հասցեում գտնվող 0.0453հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 186.9քմ / 186.9քմ արտաքին, ներքին 168.9քմ / մակերեսով բնակելի նշանակության օժանդակ և տնտեսական շինությունները ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր 186.9քմ / 186.9քմ արտաքին, ներքին 168.9քմ / մակերեսով բնակելի նշանակության օժանդակ և տնտեսական շինությունների օրինականացման համար սահմանված 312 684 / երեք հարյուր տասներկու հազար վեց հարյուր ութսունչորս / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 212911

12 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Գագիկ Սարիբեկի Խաչատրյանի,Երվանդ Գագիկի Խաչատրյանի և Անի Գագիկի Խաչատրյանի լիազորված անձ Սիրվարդ Սամսոնի Բաղրամյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Գագիկ Սարիբեկի Խաչատրյանին, Երվանդ Գագիկի Խաչատրյանին և Անի Գագիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 13.08.2003թ. տրված թիվ 882273 սեփականության վկայականը, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 25.02.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022QAZDZJ / Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող 0.1053հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 502.3քմ /արտաքին 502.3քմ, ներքին 502.3քմ/ մակերեսով բնակելի տունը, օժանդակ շինությունները և պարիսպը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող 0.1053հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 502.3քմ /արտաքին 502.3քմ, ներքին 502.3քմ/ մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր 502.3քմ /արտաքին 502.3քմ, ներքին 502.3քմ/ մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների օրինականացման համար սահմանված 607 281 / վեց հարյուր յոթ հազար երկու հարյուր ութսունմեկ/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցիչներին գրավոր հայտնելուց հետո հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 213Ա/Ա

12 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Գագիկ Սարիբեկի Խաչատրյանի լիազորված անձ՝ Սիրվարդ Սամսոնի Բաղրամյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող, 04-081-0013-0028 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայական թիվ 882273, տրված 13.08.2003թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04081PVHNWXZ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, Բարեկամության փողոց թիվ 18/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21314

12 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 46/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 18.07.2022թ. թիվ 1191Ա որոշման առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Գագիկ Ռուբիկի Կիրակոսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 46/1 հասցեում գտնվող՝ 32.6քմ / 32.6քմ արտաքին և 27.9քմ ներքին / մակերեսով տնտեսական շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0052հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Գագիկ Ռուբիկի Կիրակոսյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 32.6քմ / 32.6քմ արտաքին և 27.9քմ ներքին / մակերեսով տնտեսական շինության համար 128 379 / հարյուր քսանութ հազար երեք հարյուր յոթանասունինը / ՀՀ դրամ և 0.0052հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 230 974 / երկու հարյուր երեսուն հազար ինը հարյուր յոթանասունչորս / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գագիկ Ռուբիկի Կիրակոսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 46/1 հասցեում գտնվող՝ 32.6քմ / 32.6քմ արտաքին և 27.9քմ ներքին / մակերեսով տնտեսական շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0052հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Գագիկ Ռուբիկի Կիրակոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 213-Ա

12 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի, 16-րդ փողոցի թիվ 41 տան բնակիչ՝ Սարո Օմրանի Բաբախանլու դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող, 04-081-0030-0003 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 28.11.2022թ. վավերացված թիվ 8914 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04081BABV4LJ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 16-րդ փողոց թիվ 37 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21334

13 դեկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 07.10.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002GMBDFQ6.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի սեփականություն հանդիսացող Վ.Տերյան փողոցում գտնվող 0.0485հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վ.Տերյան փողոց թիվ 904/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21341Ա

13 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07.10.2022Թ. ԹԻՎ 1752Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 07.10.2022թ. << Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող հողամասը Վահրամ Հովհաննեսի Գազազյանի սեփականությունը համարելու և ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու մասին>> թիվ 1752Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

հիմնական մասում նշված «0.03հա » բառերի փոխարեն կարդալ «0.0284հա» բառերը և նույն մասում նշված «0.0123հա» բառերի փոխարեն կարդալ «0.0122հա» բառերը, իսկ եզրափակիչ մասում նշված «0.0123հա» բառերի փոխարեն կարդալ «0.0122հա» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2135Ա

13 դեկտեմբերի 2022թ. ք.էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Չարենցի փողոցի թիվ 11 շենքի թիվ 1բ բնակարանի բնակիչ՝ Սեդա Գրիգորի Ամալյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Չարենց թաղամասի թիվ 11 շենքի թիվ 1բ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 1138261, տրված 13.01.2005թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը 04002KAUSC5V/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.էջմիածին, Չարենցի փողոց թիվ 11 շենք թիվ 1/2 բնակարան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21364

13 դեկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԱՄԱԻՍ ՄՈՒՇԵՂԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՑՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ. Հակոբյան փողոցի թիվ 3-րդ փակուղի թիվ 2 տան բնակիչ Արամաիս Մուշեղի Պետրոսյանի լիազորված անձ՝ Ալեք Պարգևի Ավետյանի դիմումը պարզվեց, որ սեփականության իրավունքով Արամաիս Մուշեղի Պետրոսյանին պատկանող /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 01.11.2022թ. հաստատված թիվ 6082 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 02.11.2022թ. կատարված չափագրությունը/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ. Հակոբյան փողոցի թիվ 3-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող 0.04 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 22.1 կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ. Հակոբյան փողոցի թիվ 3-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող 0.04 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Արամաիս Մուշեղի Պետրոսյանի /ծնված՝ 26.06.1962թ./ սեփականությունը և ինքնակամ կառուցված 12.8քմ կիսակառույց շինությունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինության օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 213Ա

13 դեկտեմբեր 2022թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26 ՇԵՆՔԻ ԹԻՎ 1 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Լյուդմիլա Ռաֆաելի Ավագյանցը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Հովհաննես Մկրտիչի Թոթոյյանին, Գայանե Մկրտչի Թոթոյյանին, Արթուր Հովհաննեսի Թոթոյյանին, Լիլիա Հովհաննեսի Թոթոյյանին, Աշոտ Հովհաննեսի Թոթոյյանին և Հասմիկ Արմենի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 23.11.2022թ. տրված թիվ 23112022-04-0068 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296 / կողմից 24.08.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2022NC7FKL / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 18 բնակարանին կից ինքնակամ կառուցված 23.5քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 1բնակարանին կից ինքնակամ կառուցված 23.5քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 16 328 / տասնվեց հազար երեք հարյուր քսանութ / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 213Ա

13 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մ.Մեխակյան փողոցի թիվ 32 տան բնակիչ Հարություն Աշոտի Ասլանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, 04-002-0881-0050 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 26.09.2005թ, վավերացված թիվ 5634 սեղանամատյանով գրանցված հողամասի վարձակալության պայմանագիրը, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 26.10.2022թ. թիվ 7960 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի ենթավարձակալության մասին պայմանագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը 04002KHY5T3G/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Մ.Մեխակյան փողոց թիվ 37/2 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21394

13 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՎԱՐՇԻ ՂԵՎՈՆԴՅԱՆԻ,ԱՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄԻ ԲԵՅԲՈՒԹՅԱՆԻ ԵՎ ԱՐՓԵՆԻԿ ԱԲՐԱՀԱՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Լեոնիդ Ազգալդյան /նախկին Վ. Կոստանյան/ փողոցի թիվ 6 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ՝ Ռուզաննա Շավարշի Ղևոնդյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն և Արմինե Աբրահամի Վարդանյանին, Սարգիս Աբրահամի Բեյբությանին, Արփենիկ Աբրահամի Վարդանյանին պատկանող /հիմք՝ ՀՍՍՀ ժողովրդական դեպուտատների Էջմիածնի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նիստի 11.04.1990թ. թիվ 7 որոշման քաղվածքը, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 06.10.2022թ. հաստատված թիվ 5509 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 25.10.2022թ. կատարված չափագրությունը/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ա.Մանուկյան թաղամասի թիվ 264 հասցեում գտնվող 0.048 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ա.Մանուկյան թաղամաս թիվ 264 հասցեում գտնվող 0.048 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Ռուզաննա Շավարշի Ղևոնդյանի /ծնված 14.11.1957թ./, Արմինե Աբրահամի Վարդանյանի /ծնված 30.09.1984թ./, Սարգիս Աբրահամի Բեյբությանի /ծնված 16.10.1979թ./ և Արփենիկ Աբրահամի Վարդանյանի / ծնված 26.11.1977թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2140Ա

13 դեկտեմբերի 2022թ. ք.էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Լեոնիդ Ազգալդյան փողոցի թիվ 6 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ՝ Ռուզաննա Շավարշի Ղևոնդյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Ա. Մանուկյան թաղամաս թիվ 264 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՍՍՀ ժողովրդական դեպուտատների էջմիածնի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նիստի 11.04.1990թ. թիվ 7 որոշման քաղվածքը, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 06.10.2022թ. հաստատված թիվ 5509 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002J5PFB9F/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. էջմիածին, Ա. Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 264 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21/14

13 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ««Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 02.06.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 040027A7BHJX.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի սեփականություն հանդիսացող Մարշալ Բաղրամյան փողոցում գտնվող 0.0019հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 24/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2142Ա

13 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 28.10.2022թ. թիվ 1973Ա և 15.11.2022թ թիվ 2027Ա որոշումների առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Տաթևիկ Տիգրանի Վարդանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գ.Նարեկացու փողոցի թիվ 4/2 հասցեում գտնվող՝ 3.6քմ / 3.6քմ արտաքին և 1.6քմ ներքին / մակերեսով խանութը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00036հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Տաթևիկ Տիգրանի Վարդանյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 3.6քմ / 3.6քմ արտաքին և 1.6քմ ներքին / մակերեսով խանութի համար 63 796 / վաթսուներեք հազար յոթ հարյուր իննսունվեց / ՀՀ դրամ և 0.00036հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 15 991 / տասնհինգ հազար ինը հարյուր իննսունմեկ / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տաթևիկ Տիգրանի Վարդանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գ.Նարեկացու փողոցի թիվ 4/2 հասցեում գտնվող՝ 3.6քմ / 3.6քմ արտաքին և 1.6քմ ներքին / մակերեսով խանութը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00036հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Տաթևիկ Տիգրանի Վարդանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2/43Ա

13 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 23.11.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002GSUPYE5.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի սեփականություն հանդիսացող Ա.Մանուկյան թաղամասում գտնվող 0.0103հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 148/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 214/Ա

13 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022TPI7ID և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 10.03.2022թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղու ձախակողմյան մասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0631հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 34.7քմ / 34.7քմ արտաքին և 30.5քմ ներքին / մակերեսով տնտեսական շինությունը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղու ձախակողմյան մասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0631հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 34.7քմ / 34.7քմ արտաքին և 30.5քմ ներքին / մակերեսով տնտեսական շինությունը:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղու ձախակողմյան մասում գտնվող 34.7քմ / 34.7քմ արտաքին և 30.5քմ ներքին / մակերեսով տնտեսական շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0631հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Գեորգի Հրաչիկի Հովհաննիսյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21454

13 դեկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 10.03.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002WKRE2MJ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի սեփականություն հանդիսացող Երևան-Արմավիր մայրուղու ձախակողմյան մասում գտնվող տնտեսական շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0631հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Երևան-Արմավիր մայրուղի թիվ 34/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21/64Ա

13 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արաքս համայնքի Գայ գյուղի թիվ Երևանյան փողոցի թիվ 7 տան բնակիչ Շահեն Էդիկի Շահինյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 31.08.2022թ. տրված թիվ 31082022-04-0006 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Տերյան փողոցի թիվ 971/8 հասցեում գտնվող հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող 0.1908հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Տերյան փողոցի թիվ 971/8 հասցեում գտնվող հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Տերյան փողոցի թիվ 971/10 հասցեում գտնվող 0.1908հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Շահեն Էդիկի Շահինյանին:
2. Շահեն Էդիկի Շահինյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 5 509 350 / հինգ միլիոն հինգ հարյուր ինը հազար երեք հարյուր հիսուն / ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2147-Ա

«13» դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 15 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակիչները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում, Վաղարշապատի համայնքապետարան են դիմել թվով 15 բնակիչներ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի թվով 15 բնակիչների հատկացնել 910000 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված

ՑՈՒՑԱԿ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 15 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «13» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ. ԹԻՎ 2147-Ա ՈՐՈՇՈՒՄՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

N	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Հասցե	Անձնագրի N	Գումար
1.	Ավետիսյան Սվետլանա Գերասիմի	Սբ. Մ. Մաշտոց 71/27	AR0247069	40000
2.	Ղազարյան Աղավնի Հովհաննեսի	Զվարթնոց 8/33	008208787	40000
3.	Վարդանյան Սոնյա Գրիգորի ✓	Չարենց 17/44	004308177	50000
4.	Խաչատրյան Ռիտա Արամի	Բաղրամյան 16/3	AT0493482	50000
5.	Շամիրյան Սամվել Գրիգորի	Ջորջ Բայրոնի 20բ	012941753	50000
6.	Ղազարյան Մարինե Ավետիքի	Ղարիբջանյան 14	009008129	50000
7.	Խաչատրյան Անի Արսենի	Մամիկոնյան 52	AU0317409	50000
8.	Ղարիբյան Անահիտ Լենդրուշի	Միչուրին 42	AT0376041	50000
9.	Հարությունյան Արևհատ Մանուկի	Սբ. Մ. Մաշտոց 61/9	AU0493037	50000
10.	Հովակիմյան Սաթիկ Կամոյի	Չարենց 325	AU0322058	60000
11.	Սահակյան Վասպուրակ Սուքիասի	Գաբրիելյան 3	AU0271655	70000
12.	Մանասյան Մարգարիտ Արշալույսի	Սբ. Մ. Մաշտոց 63/39	AV0219728	70000
13.	Գևորգյան Ժենյա Անդրուշի ✓	Սբ. Մ. Մաշտոց 28/28	AS0560625	80000
14.	Պապիկյան Ամալյա Գրիգորի	Վազգեն Առաջին 41Ա/11	005294194	100000
15.	Մանուչարյան Հասմիկ Հարությունի	Բաղրամյան 20/48	AN0752416	100000
	ԸՆԴԱՄԵՆԸ			910000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21/284

14 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ԱԼԲԵՐՏ ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 38/22 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 217Ա հասցեում Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց համապատասխան թույլտվության հեղուկացված նավթային գազի վաճառք իրականացնելու վերաբերյալ պարզեց.

Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատիրոջ /հասցե՝ ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1 թղմ., թիվ 217 տուն պետ.գրանցման համար՝ 38.02769/2000-06-29, ՀՎՀՀ 52124987/ կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 217Ա հասցեում կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի 18.11.2022թ. կազմված թիվ ՀՎ-5 արձանագրության հիման վրա 2022 թվականի նոյեմբերի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդված 4-րդ մասերի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում Ալբերտ Շահինյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Վաղարշապատի համայնքապետարանի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 18.11.2022թ. կազմված թիվ ՀՎ-5 արձանագրությունը և 22.11.2022 թվականի զեկուցագիրը:
- Հանձնաժողովի 06.12.2022թ. 38/22 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 217Ա հասցեում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է հեղուկացված նավթային գազի վաճառք:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2022 թվականի նոյեմբերի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի դեկտեմբերի 6-ին հրավիրվել է լսում, որին մասնակցել է Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատերը:

Ներկայանալով նիստին՝ Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատերը բանավոր հայտարարեց, որ պատրաստ է մեկ շաբաթյա ժամկետում կատարել համապատասխան վճարումները և ստանալ թույլտվություն:

08.12.2022թ-ին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից հանձնաժողովին ներկայացվել է Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց համապատասխան թույլտվության հեղուկացված նավթային գազի վաճառք իրականացնելու թույլտվության համար կատարված տեղեկան տուրքի վճարման անդորրագիրը, ուստի Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատերը վերացրել է իրավախախտման հետևանքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, որպես մեղմացնող

հանգամանք իրավախախտման վնասակար հետևանքները կանխելը, պատճառած հետևանքները կամավոր վերացնելը, ինչպես նաև հիմք ընդունելով Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց համապատասխան թույլտվության հեղուկացված նավթային գազի վաճառք իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքի վճարումը՝ Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական և (կամ) հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական և (կամ) հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետի համաձայն՝ համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից դրսևորած վարքագիծը՝ իրավախախտումը դադարեցնելու ուղղությամբ և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ հոդվածներով և 169.16-րդ հոդվածի 7-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ալբերտ Շահինյան անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել վարչական տույժ նախազգուշացման ձևով:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2149Ա

14 Դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վահրամ Վարդանի Առաքելյանի լիազորված անձ՝ Տիգրան Վարդանի Առաքելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0833-0001 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ ՀԽՍՀ ժողովրդական դեպուտատների Էջմիածնի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 25.07.1990թ. թիվ 15 արձանագրության, <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 25.11.2022թ. տրված թիվ ԱՄ-1824 արխիվային քաղվածքը և և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002M6W7LBT/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք Ք.Էջմիածին, Ա.Խաչատրյան փողոց թիվ 1/1 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 215ՈՒ

14 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի 48 շենքի թիվ 22 բնակարանի բնակիչ Ռուբեն Մերուժանի Սարգսյանի դիմումը՝ իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 03112022-04-0099, տրված 03.11.2022թ. և «Աստղիկ Մանուկյան» ԱՁ /վկայական թիվ 096/ կողմից կողմից 30.11.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002EYKZ8HM, 04002JZHQSDX/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 281/1 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0922-0004/ անշարժ գույքը՝ համաձայն ներկայացված բաժանման սխեմայի, բաժանել.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 281/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 281/3 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 215/4

14 դեկտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Ա. Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 181 տան բնակիչ՝ Ֆլորա Արտավազդի Ղանդիլյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Արագածի զանգվածի թիվ 8դ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական N 2350708 տրված՝ 07.08.2007թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002HN4XJKM/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. էջմիածին, Արագածի զանգված թիվ 8/55 ավտոտնակ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 215Ա

14 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքային համայնքի և Գեղամ Վասիլի Աբրահամյանի միջև 26.10.2009թ. /սեղանամատյան 4085/ կնքվել է Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 30ա/81 հասցեում գտնվող 10.4քմ մակերեսով հողամասի կառուցապատման պայմանագիր:

Այժմ Գեղամ Վասիլի Աբրահամյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան, վերը նշված հողամասի կառուցապատման պայմանագիրը լուծելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի և Գեղամ Վասիլի Աբրահամյանի միջև 26.10.2009թ. /սեղանամատյան 4085/ կնքված համայնքի սեփականությունը հանդիսացող Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 30ա/81 հասցեում գտնվող 10.4քմ հողամասի կառուցապատման պայմանագիրը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2153Ա

15 դեկտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.11.2022Թ. ԹԻՎ 2028Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և 37-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 15.11.2022թ. թիվ 2028Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21544

15 դեկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԱ ԱԼԲԵՐՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ.Դանոյան /նախկին Սվերդլով/ փողոցի թիվ 19 տան բնակիչ՝ Արա Ալբերտի Հարությունյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 16.09.2022թ. հաստատված թիվ 7188 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 05.10.2022թ. կատարված չափագրությունը/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ.Դանոյան /նախկին Սվերդլով/ փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 0.073 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հ.Դանոյան փողոցի /նախկին Սվերդլով/ թիվ 19 հասցեում գտնվող 0.073 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Արա Ալբերտի Հարությունյանի /ծնված 04.12.1954թ./ սեփականությունը:
2. 37.5 քմ մակերեսով կիսակառույց շինությունը համարել ինքնակամ:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ